ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

18 օգոստոսի 2009 թվականի N 120-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Լիցենզավորման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ եւ 4-րդ կետերով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 775-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ եւ 2009 թվականի հուլիսի 2-ի N 774-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետերով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության ձեւը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության լրացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) քաղաքաշինության բնագավառում շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության ձեւը՝ N 3 հավելվածի.

4) քաղաքաշինության բնագավառում շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության լրացման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2009 թվականի օգոստոսի 18-ի
N 120-Ն հրամանի

._____.
._____.
Եռամսյակ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

_____
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Ա/Ձ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ N ՀԵՌ.
._____.

Հ/հ	Պատվի-րատու	Շինարա-րություն իրակա-նացնող կազմա-կերպու-թյուն	Լից N	Շինա-րարու-թյուն իրակա-նաց-նելու վայրը	Շինա-րարու-թյան, կա-ռույցի տեսակը	Շին. թույլ-տվու-թյուն N	Շինա-րարու-թյան սկիզբ, ամիս, տարի	Կատար-ված աշխա-տանք-ների ընթացք %	Շինա-րարու-թյան ավարտը
1	2	3	4	5	6	7	8	9	10

___	_____	_____	____	_____ _	_____	_____	_____	_____	_____
___	_____	_____	____	_____ _	_____ _	_____	_____	_____	_____
___	_____	_____	____	_____	_____	_____	_____	_____	_____
._____.

_____ _____
ամսաթիվ կազմակերպության, (ԱՁ) ստորագրությունը Կ.Տ.

Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2009 թվականի օգոստոսի 18-ի
N 120-Ն հրամանի

ԿԱՐԳ
Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի
տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված անձանց
կողմից ներկայացվող հաշվետվության լրացման

1. Սույն կարգով սահմանվում է "Լիցենզավորման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության մասին ներկայացվող հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգը:
2. Հաշվետվությունը լրացվում է հայերենով:
3. Հաշվետվության "Եռամսյակ" վանդակում լրացվում է հաշվետու եռամսյակը:
4. Հաշվետվության "Լիցենզավորված կազմակերպություն, ԱՁ, Լիցենզիայի N, հեռ." տողում համապատասխանաբար լրացվում է շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ լրիվ անվանումը, լիցենզիայի համարը, հեռախոսահամարը (բնակության, ծառայողական, անհատական), որոնցով հնարավոր է կապ հաստատել անձի հետ:
5. Հաշվետվության "Հ/հ" վանդակում լրացվում է հերթական համարը:
6. Հաշվետվության "Պատվիրատու" վանդակում լրացվում է պատվիրատու կազմակերպության լրիվ անվանումը:
7. Հաշվետվության "Շինարարություն իրականացնող կազմակերպություն" վանդակում լրացվում է շինարարություն իրականացնող կազմակերպության, ԱՁ-ի լրիվ անվանումը: Եթե շինարարություն իրականացնողը եւ պատվիրատուն հանդիսանում են միեւնույն անձը, ապա "Պատվիրատու" վանդակը կարող է չլրացվել:
8. Հաշվետվության "Լիցենզիայի N" վանդակում լրացվում է շինարարություն իրականացնող կազմակերպության, ԱՁ-ի լիցենզիայի համարը:
9. Հաշվետվության "Շինարարություն իրականացնելու վայրը" վանդակում լրացվում է իրականացված շինարարության գտնվելու վայրը:
10. Հաշվետվության "Շինարարության, կառույցի տեսակը" վանդակում լրացվում է կառույցի տեսակը (շենք, շինություն, էներգետիկ, հիդրոտեխնիկական կառույց եւ այլն), ինչպես նաեւ հիմնական ցուցանիշները, հարկայնությունը, հատակագծային մակերեսը:
11. Հաշվետվության "Շին. թույլտվության N" վանդակում լրացվում է կառուցապատողին տրամադրված շինարարության թույլտվության համարը:
12. Հաշվետվության "Շինարարության սկիզբը, ամիս, տարի" վանդակում լրացվում է շինարարություն իրականացնող կազմակերպության, ԱՁ-ի կողմից շինարարությունը սկսելու ամսաթիվը՝ օր, ամիս, տարի հերթականությամբ:
13. Հաշվետվության "Կատարված աշխատանքների ընթացքը %" վանդակում լրացվում է շինարարություն իրականացնող կազմակերպության, ԱՁ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքները՝ ամբողջի հետ համեմատած տոկոսային հարաբերությամբ:
14. Հաշվետվության "Շինարարության ավարտը" վանդակում լրացվում շինարարության ավարտի ամսաթիվը՝ օր, ամիս, տարի հերթականությամբ:

Հավելված N 3
ՀՀ քաղաքաշինության նախարարի

2009 թվականի օգոստոսի 18-ի
N 120-Ն հրամանի

._____.
._____.
Եռամսյակ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

_____ _____
Լիցենզավորված կազմակերպություն Ա/Ձ Լիցենզիայի N հեռ.

Հ/հ	Պատվի-րատու	Հետազննություն վայրը, շենքի կամ կառուցվածքի անվանումը, նշանակությունը	Հետազննության նպատակը	Կառուցման տարեթիվը	Կոնստրուկտիվ համակարգը, հարկայնությունը	Տեխնիկական վիճակի գնահատականը	Աշխատանքի կատարման ժամկետը	
							Սկիզբ	Ավարտ
1	2	3	4	5	6	7	8	9

_____ _____
ամսաթիվ կազմակերպության, (Ա Ձ) ստորագրությունը Կ.Տ.

Հավելված N 4
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2009 թվականի օգոստոսի 18-ի
N 120-Ն հրամանի

ԿԱՐԳ
Քաղաքաշինության բնագավառում շենքերի եւ շինությունների
տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող լիցենզավորված անձանց
կողմից ներկայացվող հաշվետվության լրացման

1. Սույն կարգով սահմանվում է "Լիցենզավորման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննության գործունեության մասին ներկայացվող հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգը:
2. Հաշվետվությունը լրացվում է հայերենով:
3. Հաշվետվության "Եռամսյակ" վանդակում լրացվում է հաշվետու եռամսյակը:
4. Հաշվետվության "Լիցենզավորված կազմակերպություն, Ա Ձ, Լիցենզիայի N, հեռ." տողում համապատասխանաբար լրացվում է շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ լրիվ անվանումը, լիցենզիայի համարը, հեռախոսահամարը (բնակության, ծառայողական, անհատական), որոնցով հնարավոր է կապ հաստատել անձի հետ:
5. Հաշվետվության "Հ/հ" սյունակում լրացվում է հերթական համարը:

6. Հաշվետվության "Պատվիրատու" սյունակում լրացվում է հետազննություն կատարելու պատվիրատու հանդիսացող կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն կամ ֆիզիկական անձի համապատասխան տվյալները:

7. Հաշվետվության "Հետազննության վայրը, շենքի կամ կառուցվածքի անվանումը, նշանակությունը" սյունակում լրացվում է շենքի, կառուցվածքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը եւ նշանակությունը (բնակելի, հասարակական, արտադրական եւ այլն):

8. Հաշվետվության "Հետազննության նպատակը" սյունակում լրացվում է, թե ինչ նպատակով է կատարվում հետազննությունը (տեխնիկական վիճակի գնահատում, գործող նորմերի պահանջներին համապատասխանության որոշում, վերակառուցման նպատակահարմարության որոշման կայացում եւ այլն):

9. Հաշվետվության "Կոնստրուկտիվ համակարգը, հարկայնությունը" սյունակում լրացվում են տվյալներ կոնստրուկտիվ համակարգի (շենքի կամ կառուցվածքի կոնստրուկցիաների եւ կոնստրուկտիվ տարրերի միասնական տեղաբաշխման, միմյանց հետ միացման ու փոխհամագործակցման, այդ թվում սեյսմամեկուսացման հատուկ համակարգերի) եւ հարկայնության վերաբերյալ:

10. Հաշվետվության "Տեխնիկական վիճակի գնահատականը" սյունակում տրվում է շենքի, կառուցվածքի տեխնիկական վիճակի գնահատականն ըստ վնասվածության աստիճանների:

11. Հաշվետվության "Աշխատանքի կատարման ժամկետը" սյունակում լրացվում է հետազննական աշխատանքների սկիզբը եւ ավարտը (օր, ամիս, տարեթիվ):

12. Հաշվետվությանը կից ներկայացվում են շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ տրամադրված եզրակացությունների պատճենները: